ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Հնաբերդ համայնք
098025050, hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 փետրվարի 2019թվականի N 04

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 02 հերթական նիստի օրակարգը.

1.Հնաբերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

2.Հնաբերդ համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
2. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
3.ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
3. ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2019թվականի N 05

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի 09.02.2012 թվականի թիվ 13 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող հանձնաժողովի 01.06.2018 թվականի թիվ 112 եզրակացությունը,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հնաբերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող ջրային հողերից 0.01648 հեկտարի /կադաստրային ծածկագիր՝ 0942-0001/ նպատակային նշանակությունը փոփոխել և դասել բնակավայրերի հողերի կատեգորիայի՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ
3. ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ
4. ՄԻՆԱՍՅԱՆ ՄԵՂՈՒ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ.098025050, hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 փետրվարի 2019թվականի N 06-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին Հնաբերդ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
Վարչական բյուջեի ծախսային մասի 11.01.02.51 (Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4891 (Պահուստային միջոցներ) հոդվածից 12.0 հ. դ. տեղափոխել 01.01.01.51 (Կառավարման մարմնի պահպանում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4214 (Կապի ծառայություններ) հոդվածի վրա՝ Հնաբերդի համայնքապետարանի ենթատիրույթի գրանցման համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ